ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 271-Ա/3 «17» դեկտեմբերի 2024թ.

«ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/97» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի դեկտեմբերի 16-ի նիստի արձանագրությունն առ այն, որ գնման ընթացակարգի ընտրված մասնակից «Գարանտ 24» ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով՝ eauction.armeps.am համակարգի միջոցով ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծը, սակայն վերջինս «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում չի ներկայացրել ստորագրված պայմանագիրը, որակավորման ու պայմանագրի ապահովումները, կանխավճարի երաշխիքը և «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն «Գարանտ 24» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, ինչպես նաև ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2–րդ մասով ու «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Գարանտ 24» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02910767, գործունեության հասցեն՝ ք.Երևան, Նալբանդյան փող. 25/14 շ, 76 բն.) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

12/17/2024

ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Signed by: HAKOBYAN HASMIK 5610800161 **ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ**